

յայտնութիւն մեծ, ոչ միայն յառաջիկայիս՝
այլ և առ յապա յամենայն⁸⁶ մինչեւ ի վախճան
աշխարհին⁸⁷ որ լինելոց են, ծանոյց քեզ⁸⁸ և ա-
մենայն հաւատացելոց ի բան նորա. որպէս ճշմա-
րիտ նախնոյն քո առնն Աստուծոյ⁸⁹ սրբոյն Գրի-
գորի, իսկ քեզ՝ մինչեւ ի կատարած⁹⁰ աշխարհիս,
որ ինչ միանգամ⁹¹ լինելոց է՝ եցոյց զամենայն:
Եւ արդ լո՛ւր և պատմեցից քեզ զմեկնութիւն

մեծի յայտնութեան⁹², որպէս և հրամայեցաւ
ինձ ի վերին զօրութեանէն ցոյցանել քեզ⁹³ զա-
մենայն: Եւ դու ունկնդիր լի բազում զգու-
շութեամբ, և գրեալ ի տախտակս սրտի քո ան-
մուաց, զոր ի մագաղաթի⁹⁴ գրուեալ թողցես
հաւատացեալ Ժողովրդոց և անսխալ մինչեւ ի
վախճան աշխարհի⁹⁵:

(Հարունակի)

86. Ալ. Սփ. Բ. Գ. Տփղ. տալս. կը յաւելում
«իրաց որ»:

87. Ալ. Բ. Գ. տալս. «ժամանակի»:

88. Ալ. Սփ: «Բե»:

89. Ա. Ժ. Ա. տալս. չ. «Առն Աստուծոյ»: Ալ. «Ճշմր.
ան նիւն. քմ. առնն Աստուծոյ»:

90. Ալ. Սփ. «կատարումն»:

91. Նոյնը՝ չումիմ «միանգամայն»:

92. Ա. Բ. Ժ. Ա. տալս. չ. «Մեծի յայտնութեան»:

93. Նոյնը՝ չիք «ի վերին զօր. ցոյցանել (Ալ. Ժա-
նուց.) քեզ զամեն»:

94. Նոյնը՝ «Եւ զրով»:

95. Զմ. Ալ. Բ. Գ. տալս. «ժամանակի»:

ԹՈՒՆՈՎԱՅԻ ԱՆՀԵՏԱՅԱԾ ՀԱՅ ԳԱՂՈՒԹՅՆ ՆՇԽԱՐՆԵՐ

Թռնովայի Ս. Աստուածածնի աւերակ եկեղեցոյն գաւիթը գտնուող
տապաւնագիրներուն պատմեցնելը

Առաջին

Այս է տապան համգոտեան մահտեսի Գրիգորի
դուստր վարվառիմէ որ համգեաւ ի Տէր ՌժՅԸ
(1709):

Երկրորդ տապանաքար մարմարեայ

Նայեցարուք ծնունդը երկրի
ի սոյն տապան որ տեսանի
Մարմին տիկնոջ հիւրի խանի
էր կողակից սա Գրիգորի
Մահտեսույ բարեպաշտի
Տեղեաւ բնիկ Դռնովացի
Ընդ առն իւրում սա կենակցի
Պարկեշտ վարուք ... տարի
Ամուսնացոյց դուստր և որդի
Եւ վախճանի հայոց թուի ՌժՅԹ (1730)
Որք համգեղիք տուք զողորմի:

Երրորդ տապանաքար մարմարեայ

Անցաւորք ցանապարհի
Տեսէք շիրիմս այս գովելի
Քանգի է սա դուռ տապանի
Արդար մանկան Արքանամի
Սնեալ սրբոյ աստիճանի
Եւ ընթերցող մոր Սիոնի
Որ է որդի սա Գրիգորի
հեզ մահտեսույ և իշխանի

Սուրբ հաւատով առ տէր փոխի
Մանուկ տիօք ըստ հասակի
Թողեալ կսկիծ իր ծնողի
Տարակուսեալ կեցօք շրջի
Անմխիթար վերա երկրի:

Չորրորդ տապանաքար մարմարեայ

Հարք մարք համգեղիք շիրմիս
Ափսոսացէք զխեղճուկ գերիս
Մահմ գրաւեց զիս եղկելիս
Եղ ի բամտի այս տապանիս
Շատ խեղճ տարիմ լի հիւրիս
Երեք տասնամեայ կուսիս
Եւ հօրն իմոյ մահտեսիս
Որոյ անունն է Գրիգորիս
Եւ մօրն իմոյ հուրի խանիս
Եւ քնն իմոյ Մարիամիս
Հայոց մեծաց թուականիս
Համրիս որք համգեղիք արուք զողորմիս
ՌժՀիս (1721):

Հաւաքեց Ս. ՏԵՐՏԵՐԵԱՆ

Սոյն հին եկեղեցին դժբախտաբար 50 տարի է ի վեր
փակուած է և այսօր չորս պատերը միայն կանգուն կը
մնան. տապանագիրներու քարերը շեղ մարմար լինե-
լուն համար պուլկար կառավարութիւնը զանոնք վեր-
ցուցած է և կը պահպանէ իբրեւ հնութիւն:

ՄԻՋՆԱԴԱՐՆԱՆ ՀԱՅ ՏԱՂԱՍԱՑՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԱՇՈՒՂ ԱԷՖԷՐ

Ահա ուրիշ անծանօթ Աշուղ մը, որուն
մասին ո՛չ մէկ կենսագրական ծանօթու-
թիւն ունինք, և մուրալն ալ անկարելի
լուծեամբ միայն կը վարձատրուի հայ
ուսումնասիրութենէն: Առջին անգամ Պ.
Զօպանեան հրատարակած է անոր մէկ
տաղը «Հայ էջեր»-ու մէջ¹: Այս առթիւ
ան կ'ըսէ. «Սէֆէրի տաղը (5-6) աւելի
եւս խառնակ է և անհաւասար. բայց
պանդխտութեան ցաւը երգող ինչ զմայ-
լելի քանի մը տողեր կան հոն՝ գրեթէ
համբաւաւոր «Կռունկ»-ին հաւասար»²:
Պ. Զօպանեան կը հրատարակէ Սէֆէրի
այդ տաղը՝ Էջմիածնի թիւ 1999 ձեռա-
գրէն առնելով: Իմ Տաղարանիս (գրուած
1681ին) մէջ ալ կայ այս տաղիս օրի-
նակը, բիշ մը տարբեր և Պ. Զօպանեանի
հրատարակութենէն մէկ տուն աւելի:
Ահա հոս կը հրատարակեմ իմ օրինակս:

ՏԱՂ ՎԱՍՆ ՀՈԳՈՅ

Ընգակ ու մալն եղեր մարդուն դէմ չի գար,
Հոգուս առնողն որ գայ ես ինտոր անեմ:
Ինձի համար աւտարն զհոգին չի տար.
Հոգուս առնողն որ գայ ես ինտոր անեմ:

Ղարխալութեան տեղըն սըրտիկըս խոցէ,
Հիւրնդուկ պատկեր եմ դըռնակս ի գոցէ:
Մարմինըս բնուրդիկը կըրակ ու բոց է,
Հոգուս առնողն որ գայ ես ինտոր անեմ:

Կըտրիճին զըլուխն նէչէ հալ կուգայ,
Զունիմ հայր և մայր որ նըստի զիս հոգայ,
Հաւասով լաթ արի, աւր մի չհահայ,
Հոգուս առնողն որ գայ ես ինտոր անեմ:

Իմ հայրն ու մայրն երկու ձեռս է որ կու բանի,
Ոչ հանգիստ հաց կերայ, 'ւ ոչ քունըս կու տանի,
Դիմացըս կայներ է գէտ ըզհարամի,
Հոգուս առնողն որ գայ ես ինտոր անեմ:

Գըրողն որ կուգայ չի աներ յիմաց,
Տեսեր ես կայներ է յաչիցըդ դիմաց,
Խելքս ի զլուխըս չըկայ հոգի չմընաց,
Հոգուս առնողն որ գայ ես ինտոր անեմ:
Հիւրնդուկ եմ քովս է նըստեր պէքճի³,
Աճալ խամսք չի անրնի որ գըտնեմ տիլէքճի⁴,
Հալայ⁵ զըրաւդ մարիկըդ չհանգչի,
Հոգուս առնողն որ գայ ես ինտոր անեմ:

Սըրտիկըս կուլայ հարիկ մարիկ կու կանչէ,
Գոհութիւն որ պառկած տեղիկըս խան չէ,
Կըտրիճուրաց մէջ լինալու բան չէ,
Հոգուս առնողն որ գայ ես ինտոր անեմ:

Զեւկիւիկս յափուց էս դատէհիկս⁶ առէք,
Ինչու չէք ի լար զիս, քանի կու լըռէք,
Գիտեմ որ զիս այլ կու տանիք թաղէք,
Հոգուս առնողն որ գայ ես ինտոր անեմ:

Ես որ մօրէս եղայ մեռնելու համար,
Լոյս աշխարհիս վերայ կապեր է կամար,
Սէֆէրըն կ'ասէ սուրբ աստուածամայր,
Հոգուս առնողն որ գայ ես ինտոր անեմ:

Իմ տաղարանիս մէջ ասկէ զատ կան
Սէֆէրի երկու ուրիշ տաղերը, որոնք կար-
ծեմ առաջին անգամ ըլլալով կը հրա-
տարակեմ:

ՏԱՂ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ

Հրեշտակին բարեւ բերին,
Աստուածածին մէյրէմ անայէ,
Քրիստոս քեզ կու բնակի,
Զապալմայ օնտան եանի:

Աստուածածին խիտ արմընցաւ,
Գաբրիէլ հրեշտակին հարցաւ,
Թէ զիս ստեղծողն ի յիս դարձաւ,
Շեւքուր էլլէտի սուր հանէ:

1. «Հայ էջեր». էջ 21. - 2. Անդ՝ էջ ԺԸ. - 3.
Պահապան. - 4. Մուրացկան. - 5. Ինչալահ = տար
Աստուած. - 6. Բաժակ:

Գաբրիէլ հրեշտակն հրամայեաց,
Մի տըրտմիր Մարիամ մայր մեծ,
Լոյս ի վրան կամար կապեց,
Ինճի տիգիլտի տու հանէ:

Լոյսն ի վրան ճառագեցաւ,
Աշխարհըս օր կեցաւ,
Աշխարհըս բարով լեցաւ,
Սէլամ վէրինճէ ճիհանէ:

Տեղը լայեխ եղաւ վանաց,
Լոյս էր ելաւ, լոյսը գնաց,
Մարիամ կոյս էր, կոյս մընաց:
Ճիհանէ կեւտի պիր տանէ:

Քառասունք պահեց մարիամ կոյսը,
Ոչ ի տուն էր և ոչ ի դուրսը,
Վըրայէն չէր երթար լոյսը,
Պիր յըլտըզ չըքտի նշանէ:

Երեք թագաւոր իմացան,
Խընդացին 'ւ ուրախացան,
Ելան եկին յետ չղարձան,
Ըստտ կէտիւէր պիր խանէ:

Այն երեք թագաւորքն որ կան,
Հընդուտանայ ելան 'ւ եկան,
Աստուծոյ գոհութիւն կու տան,
Տօրտէր պիր իտի իւշ տանէ:

Երեքն որ ի մէկ տեղ մըտան,
Ամէն մարդ գիր կերպըն գըտան,
Աստուծոյ գոհութիւն կու տան,
Իւշտէ տուրտու տիվանէ:

Երեքն որ ի մէկ տեղ տեսան,
Ուրախացան գընաց թասան
Սրտերնուն մուրատին հասան,
Իւզլէրին սիւրտուէր սուփ հանէ:

Մեղքն, Գասպար և Պաղտատար,
Ասող մի ելաւ եկար հասար,
Եւ ըզֆրիտոս մանուկ տեսար,
Իր մօրն գիրկն էր տուհանէ:

Աստուածածին խիստ կու վախէր,
Գիշեր ու ցերեկ սիրտն ի յահ էր,
Ինքը զինքն յանկի կու պահէր,
Ղուրթարտը օղլունի յանէ:

Մէկ կոապաշտմ կար մարդ էր,
Աչքըն տեսածըն կու մորթէր,
Մախսում տըղաքը կու շարգէր,
Օւ քեաֆիր փէք կիրտի դանէ:

Եկին ի նազարէթ տարին,
Որ լըմընցաւ ամէն բարին,

Շատ բորոտ լաւցուց այն տարին,
Թէքրար տէօնտէրտի ինսանէ:

Սիմէոն ծերն առաւ զըրկեց,
Աստուած ըզինք մեղաց փըրկեց,
Յերուսաղէմ բարեւ զըրկեց,
Չաղըրտըրլար կէլ պու եանէ:

Աստուածածին Մըսըր գընաց,
Լըման վեց տարի մի հոն մընաց,
Մըսըրայ հողն ու ջուրն էր օրհնած,
Սույուն իջտէ դանէ դանէ:

Գընաց մըկըրտեցաւ գետը,
Սուրբ Յովանէս էր իր հետը,
Յիսուս Քրիստոս վարդապետը,
Սաղաւըն օլտու սույղուեանէ:

Օրհնեաց ըզսուրբ Յովանէսը,
Ոչխար արծել էր արուեստը,
Լուսն իջաւ լեռներուն կէսըն,
Չօպանլար պաքտը օյանէ:

Եկաւ քարոզելով գընաց,
Մէկ կընիկ մի անկաւ յոտքն ի լաց,
Տասնեւհինգ տարի ողջ մընաց,
Ղազարի կէթիրտի ճանէ:

Չորս աւուր մեռած էր Ղազար,
Կանոն գիրքտէ պէյլէ եագար,
Մեր տէրն եկաւ արաւ նագար,
Մէզարտան չըքտը իւրեանէ:

Լաւ է Քրիստոս ու դուռն է,
Արգար մըկըրտելու գուռ է,
Աշակերտաց մէկը ծուռ է,
Էքտիդի պիթմէտի նանէ:

Տեսան աշակերտն ինչ արաւ,
Չֆրիտոս ցըցուց տարաւ,
Չըհուտն ըստակ երես առաւ,
Այտըղի անճայ օթայ եանար:

Տեսէք Պետրոս ինչ կ'անէր
Չըհընուն դիհը կու ծամէր,
Ինքըզինք մըտաց չէր հանէր,
Չֆրիտոս մատնողն Յուդայ էր:

Շատ ծամեցին ծամծմեցին,
Չֆրիտոս ի խաչըն հանեցին,
Չեւքն ու գոտքըն բեռեւեցին,
Շահիթալար քաշտը պիր եանէ:

Չարչարեցաւ մեզի համար,
Լոյսն ի վրան կապեց կամար,
Եկաւ ի լաց աստուածամայր,
Կեօզու եաշի տանէ տանէ:

Մեղաւորին տեղը մութ ու խիստ խաւար է,
Անտէր 'ւ անճարակ պատկեր գէտ քար է,
Հոգին ու մարմինն երկուքն եղբայր է,
Եկոյ մարմին ոյմիշ եղիր դու հոգուդ:

Աշվընիս կու տեսնէ մեք գմեզ կարծենք,
Թէ վարձք կտնենք զարնենք կու գործենք,
Այս սուտ աւտընտըս մեղք կու գործենք,
Եկոյ մարմին ոյմիշ եղիր դու հոգուդ:

Այս սուտ աստընտըս եթողը հուր եմ,
Հախ դատաստան կ'ըլլայ մեր վարձքն ի մուրէ,
Չհոգուդ ճամբան հոգայ քանի աշվիդ սուր է,
Եկոյ մարմին ոյմիշ եղիր հու հոգուդ:

Գիրք 'ւ աւետարանը գըրած է ատանկ,
Այս սուտ աստընտըս եկանք ինչ գըտանք,
Դատաստանին մեք ինտոր ճուղապ տի տանք,
Եկոյ մարմին ոյմիշ եղիր դու հոգուդ:

Աստուածածին որ ըստեղծեց յօրինեց գմեզ,
Հոգոյս արքայութիւն կ'ուզեմ ես,
Դու զհոգուդ ճամբան հոնայ զթէպտիրըդ տես,
Եկոյ մարմին ոյմիշ եղիր դու հոգուդ:

Սէֆէրն կուլայ թէ ամէնիս գէշ է,
Հոգին պիտուական մարմինը քէշ է,
Շալլայ աստուածածին զմեր մեղքըն չյիշէ,
Եկոյ մարմին ոյմիշ եղիր դու հոգուդ:

Այսպէս, երեք տաղեր կը հրատարաւ
կեմ անձանութ մնացած Աշուղ Սէֆէրէն:
Ո՞վ է ան, ո՞ւր և ե՞րբ ապրած կամ մեւ
ռած, ինձ անձանութ կը մնայ: Եւ սակայն
իր գրութիւններէն դատելով՝ աշխարհ
տեսած, կեանքը ապրած, գրոց մարդ է
ան. իր երկրորդ տաղին մէջ ինքն իսկ
կը խոստովանի Կանոն Գիրք կարդացած
ըլլալը, ինչպէս նաեւ կը տեսնուի Ս.
Գրոց Հին ու Նոր Կտակարանին քաջաւ
ճանութ ըլլալը:

Ըստ երեւոյթին Աշուղ Սէֆէր ապրած
է շատ ճամբորդած կեանք մը, ճաշակած
է պանդխտութեան դառնութիւնները ինչ-
պէս որ իր առաջին տաղէն կարելի է
եզրակացնել: Երկրորդ տաղին համաձայն
այցեւած է Երուսաղէմ, թէեւ առ այդ
Միաբանք և Այցեւոր Հայ Երուսաղէմի եր-
կասիրութեան մէջ Աղաւնուհի Եպիսկ.
ո և է յիշատակութիւն չունի: Հ. Ն. Ա.
կինեան հարեւանցի մը կը յիշէ թէ «Ե-

Աստուածամայր յուշ իմացաւ,
Այս խըզճերուս ով դիմացաւ,
Երկինք գետինք հետը լացաւ,
Պէյիթ տէտի դանէ դանէ:

Ջերմ գըրկեց ի վեր առաւ,
Պատնեց ի գերեզման տարաւ,
Չինչ որ ասաց դապուլ արաւ,
Ատամ կէրէք քի ինանայ:

Անոնց մուսին, անոնց մուսան,
Բացին զգերեզմանն տեսան,
Քրիստոսի սրտին չհասան,
Ջիֆուտլար կէլմէզ իմանէ:

Գնաց քակեց զըժոխքը,
Չստանան զրկեց յանդունդը,
Ազատեց զամէն ոգիքը,
Ազամ չըքտի հաւայ անէ:

Քառասունք օր լեռը կեցաւ,
Չալայրախն ի բաց ու համբարձաւ,
Աշակերտին մէկտեղ կեցաւ,
Չըքտը կէթտի հէվայէ:

Աշըի Սէֆէրն եկաւ ի հոս.
Աստուածածին ու Քրիստոս,
Գերեզմանէն կու բըղխէ լոյս,
Չըխար կիտէր էսիմ անէ:

Որն ասողաց, որը լսողաց,
Հայր մեղայ մի ասողաց,
Տէրն ողորմի իւր ծընողաց:

Դարձեալ սոյն տաղարանէս առնելով
կու տամ Աշուղ Սէֆէրի ինձի ծանօթ
երրորդ տաղը, նոյնպէս անտիպ մինչեւ
այժմ:

ԲԱՆՔ Ի ՎԵՐԱՅ ՄԵՂԱՑ

Այս սուտ աստընտըս ինչուն հաւատաս,
Եկոյ մարմին ոյմիշ եղիր դու հոնուն,
Գիշեր ցորեկ մեղաց ճամբուն կու վագիր,
Եկոյ մարմին ոյմիշ եղիր դու հոգուդ:

Չյեճիգեցար մեղաց ճամբան վագելով,
Ուտելով խըմէլով դու զքեզ սագելով,
Չմեզ մեղաւոր արիր մըտօք ուզելով,
Եկոյ մարմին ոյմիշ եղիր դու հոգուդ:

Հանց մեղաւոր եմք չէ մնացեր խամ,
Երկրի ալէմի եղակ ծուլ ու ծամ,
Հոգին կու վկայէ կու տանի ի ժամ,
Եկոյ մարմին ոյմիշ եղիր դու հոգուդ:

բուսադէմ այցելած են նաեւ թորոս և Սէֆէր Վանեցի Տաղասացները¹ : Ինչ պատճառաւ Սէֆէր Վանեցի նշանակուած է Հ. Ակինեանէ, ինձ կը մնայ անձա-նօթ : Ինծի ծանօթ Սէֆէր մը կը յիշուի Լէմպէրկի Հայոց ամուսնական դաշնա-զրաց կարգին « Դէսդամէնդը ուճմալը ճանլը Խաչատուրնուկ Սէֆէր օղլունակ Դօխադը Anno 1620, 11 Septembris » : Անշուշտ եթէ Հ. Ակինեան Սէֆէրի Վանեցի ըլլալուն փաստը ունի, ինձ հարկ չի մնար նոյնացնել Աշուղ Սէֆէրը Դօխադցի Սէֆէրի հետ ի Լէմպէրկ :

Սէֆէր իր Բ տաղին Ե տան առաջին տողովը կ'աւանդէ Երուսաղէմի Աստու-ծածնայ Աւետման տեղւոյն վրայ շինուած Լայկիս = վայելուչ վանքի մը մասին, ա-

սիկա ծանօթութիւն մըն է որ աւանատես մը միայն պիտի կարենար տալ :

Սէֆէրի տաղերուն ուրիշ օրինակներն ալ ինձ կը պակսին, նոյնիսկ անոնց գո-յութեան մասին յիշատակութիւններու չեմ հանդիպած ինձ ծանօթ ձեռագրաց ցուցակներուն մէջ, և սակայն, անտա-րակոյս բազմաթիւ արտադրութիւններ ըլ-լալու են, դատելով հեղինակին գեղեցիկ արտադրութիւններէն : Վիեննայի թիւ 412 երգարանին մէջ, գրուած 1765ին, կայ տաղ մը « Աշուղամայ ասացեալ ի Սօֆարօղլու ի վերայ Բաղաքին Լըեւանայ : Երկիրքըն թունտ առաւ, գետինը գո-ռաց » :

Յ. ԲԻՒՐՏԵԱՆ

ՕՐՈՒԱՆ ԳՐԲԵՐ (ԳՐԱՆՕՍԱԿԱՆՆԵՐ)

Կ. ՍԱՍՈՒՆԻ

« Այրիկեան եղևոր քննական ակնոցով », Փարիզ, 1931 :

Համաշխարհային պատերազմին քարու-քանդ եղած հայութեան աղիտալի օրերուն պատասխանատուութեան քննութիւնը կը կատարէ Կ. Սասունի :

Կարելի էր ազատիլ այդ վիճակէն : Ըստ հեղինակին՝ հայը ինչ չիրք ալ բռնէր, պա-տերազմը պիտի պայթէր. պատերազմը իր ճամբով պիտի ընթանար : Անշուշտ, ինչ-պէս կը գրէ հեղինակը, հայութեան ան-պատում աղէտը համաշխարհային պատե-րազմէն ծագած չէ, այլ թուրք կառա-վարութեան ուղեղէն : Թուրքը գիտակցօրէն կազմակերպեց մեր ազգին բնաջնջումի ծրագիրը և զայն իրագործեց : Թուրքը եր-բեք իր այդ գազանային ոճրագործութիւնը

կարող չէ մաքրելու պատմութենէն : Իր այդ սեւ էջը պատմութեան մէջ միշտ սեւ պիտի մնայ :

Մեր կորուստն անպատում է. հեղի-նակը և ամէն հայ այս համոզումն ու-նինք, որ այսքան աղէտներէն վերջը, միակ յոյսի ապաւէն մնացած է Արարատեան փոքրիկ Հայաստանը, որ պահ մը ան ալ թուրքին գազանութեան ենթակայ եղաւ և հոն հայը իր գերագոյն ճիգերով վեր-ջապէս կըրցաւ պահել իր գոյութիւնը :

Այդ դժօխային կացութեան մէջ կա-րելի չէր ինքնապաշտպանութիւնը : Մահը վճռական էր. կը մնար քաջաբար կռուիլ և քաջաբար մեռնիլ : Այդ ալ պատահե-ցաւ : Ռուսաստան արդէն պատերազմի մէջ էր. հայ կամաւոր ռազմիկներ ամէնէն առաջ մտածեցին սահմանակից հայ քա-ղաքներու փրկութիւնը :

Սասունին այս մասին կը գրէ թէ 1914ի ռուսական բանակները եւ հայ կամա-ւորները կը մտնէին Բասեն և Ալաշկերտ և այդ միջավայրերէն կ'ազատէին 46 հազար հայեր : 1915ի առաջին ամիսնե-րուն մէջ, ռուս բանակը կը զբաւէ Բու-

լանուի — Մանագլերտ², որով թուրքին սուրէն կ'ազատին 34.000 հայեր :

Պահպանողական հայերը, որոնք նոյն իսկ ահաւոր ջարդերէն վերջը տակաւին զամուած կը մնային Պոլիս իրեւ թուրք կառավարութեան պաշտօնեայ, զանոնք Սասունին կը քննադատէ, անոնց և պա-տրիարքին խոհեմութեան խորհուրդները կը պարսաւէ, ըսելով թէ անոնք մոռցան որ իրենք մարտիրոս ցեղի մը ներկայա-ցուցիչներն էին, իրենք չտեսան որ իրենց ցեղը կ'այրէր հրդեհի մէջ, ու կը հալէր բարկ աւազներուն վրայ : Նման քննա-դատութիւն մը արդար չէ. այդ երեւելի հայերն ինչ կրնային ընել. հաճի էր որ իրենք ալ թուրք դահլիճին ըսէին, — Մենք ալ հայ ենք, մեզ ալ մեռցուցէք... : Սա-սունին չի գիտեր որ այդ ձերակուտա-կաններէն եղան ոմանք որ ամէն միջոց բանեցուցին և կըրցան ազատել տարա-զրեալներէն մէկ քանինը :

Սասունին ընդվզումի չղիմող ժողո-վուրդին ներողամիտ չէ. սարուկ համա-կերպողներուն հետ համաձայն չէ, և սա-կերպողներուն հետ համաձայն չէ, և սա-կայն կը խոստովանի որ պատահեցան շարք մը ընդվզումներ, և ատով ինչ ինչ տեղեր ժողովուրդը ինքնին իր փառապը-սակը կազմեց, թշնամիին հետ կռուեցաւ և այդ կերպով համակերպութեան արատը մաքրեց :

Ընդվզումի դիմեցին Սասունի և Տա-լօնի քաջ ժողովուրդին քաջազունները : Մէկ քանի գիւղեր ազատեցան Դատուանէն առաջացող ռուս բանակին հետ նահան-ջելով : Վանի նահանգէն կ'ազատին 111 հազար հայեր : Խնուսի հայերը զէնքի դի-մելով, քառասուն օր կը կռուին և 4000 հայեր կը փրկուին : Ինքնապաշտպանու-թեան խիզախ օրինակը տուաւ Շապին-Դարահիսարի ժողովուրդը : Սասունին չի մոռնար յիշելու Ուրֆայի հայերուն քա-ջախիզախ դիմադրութիւնը զոր կը նման-ջընէ Յունաստանի Միսոլոնիլին : Հեղի-նակը հակադաշնակցականներու հետ շատ խստիւ կը վարուի. որոնք էին այդ հա-կադաշնակցականները՝ յետադիմականնե-

րը, ռամկավարները, հնչակեանները, կը-ղերականները, հայ հարուստ, կալուածա-տէր եւ առեւտրական դասակարգը, եւ բազմաթիւ ապադասակարգային տարրեր. ասոնք ըստ հեղինակին հակադաշնակցա-կան էին անձնական շահերէ զրդուած կամ քաղաքական գիտակցութենէն զուրկ ըլ-լալուն համար :

Սակայն արդար ըլլալու համար Սա-սունին մոռնալու չէր ըսելու որ անոնք միեւնոյն ատեն թթու ազգասէրներ էին : Անոնք ազգին շահը պաշտպանելու հա-մար շուտով հասկցան թուրքին նենգաւոր թշնամութիւնը :

Հակադաշնակցականներն ալ անիրաւած են երբ համոզուած կ'ըսեն թէ դաշնակ-ցականները իթթիհատականներուն հետ միացած հայութեան թշնամիները եղած են : Սասունին լինելով Դաշնակցութեան ջահակիրը՝ կը խոստովանի որ իթթիհա-տական թուրք կառավարութիւնը արտաք-սապէս շատ բարեկամ կը ձեւանար Դաշ-նակցութեան հետ և միեւնոյն ատեն իր « Խարդախ աչքը կը պահէր անոր վրայ » :

Միալած չեմ, թէ ըսեմ որ Սասունին այս անդրադարձութիւնը մետասաներորդ ժամուն կը կատարէ. այս անդրադարձու-թիւնը 1911ին ես կ'ընէի Վառամեանին և Զարգարեանին, ու անոնք բացարձակա-պէս չէին համոզուեր... Սակայն նոյն տարուան վերջերը Դաշնակցութիւնը « իթթիհատ — դաշնակցական » համաձայ-նութիւնը չեղեալ հռչակեց : Եւ արդէն շատ յայտնի եղած էր թուրք կառավա-րութեան հայուն դէմ ցոյց տուած թշնամի խարդախութիւնը :

Պէտք է խոստովանիլ որ հայկական դատը՝ մտաւորական հայ յեղափոխական-ները կ'արժարձէին : Եւրոպան կ'անդրա-դառնար եւ Պալքանեան պատերազմէն վերջը մեծ պետութիւնները պարտուած թուրքին կը պարտաւորէին Հայաստանի մէջ մտցնել խոստացուած բարենորոգու-մները. Հայաստան կը բաժնուէր երկու մեծ նահանգներու որոնց մարզպան նշա-նակուած էին Հոֆ և Վէստէնէնկ եւրո-